



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



Ս. ԱՍՏՈՒԾԱԾՆԱՅ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՅՔԻՆ

**ԱՍՏՈՒԾԱՄԱՅՐԸ ԹՈՂ ՄՆԱՅ ՀԱՅ ՄՕՐ
 ՀԱՄԱՐ ԿԵԱՆՔԻ ՏԻՊԱՐ**

ՅՈՐԴՈՐԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԸ

Հայաստանայց Առաքելական եկեղեցին Կիրակի, 12 Օգոստոսին նշեց Ս. Աստուածածնայ Վերափոխման տօնը: Այս առիթով, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ տեղի ունեցաւ Ս. Պատարագ եւ խաղողօրհնէքի աւանդական արարողութիւն:

Այս տօնը է նաեւ Կլենտէյլի Ս. Աստուածածին եկեղեցւոյ անուանակոչութեան տօնը: Համաձայն մեր Թեմի աւանդութեանց, այս առիթով, Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան Ս. Պատարագ մատուցանեց Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, հաւատացեալներուն ուղղեց օրուան խորհուրդէն մեկնող պատգամ մը եւ ապա, կատարեց խաղողօրհնէք ու մատաղօրհնէք:

Բազմահազար հաւատացեալներ համախմբուած էին եկեղեցւոյ կամարներուն տակ, հաղորդակից ըլլալու օրուան խորհուրդին: Առաջնորդ Սրբազանը իր քարոզին մէջ վեր առաւ Ս. Աստուածածնի արժանիքները, ընդգծելով անոր բարութիւնը, ազնուութիւնը, խոնարհութիւնն ու համեստութիւնը: Ան շեշտեց, որ ան արժանացաւ երկնային շնորհի, դարձաւ Աստուածամայր, ու տիպար օրինակ մը բոլոր մայրերուն ու կիներուն համար:

Առաջնորդ Սրբազանը անդրադարձաւ նաեւ այն սիրոյն ու յարգանքին, որուն կ'արժանանայ Ս. Աստուածածին մեր ժողովուրդին ու յատկապէս մեր մայրերուն ու քոյրերուն մօտ: Ան հաստատեց, որ ինչպէս անցեալ դարերուն, նոյնպէս այլ այսօր, մեր մայրերուն ու մեր քոյրերուն համար Աստուածամայրը կը մնայ տիպար օրինակ եւ աղօթքներ ընդունող բարեխօս: Աստուածամայրը Չաստուած սիրեց ամենայն սրտով, Աստուծոյ Խօսքին մտերմացաւ, Անոր Կամքին հպատակեցաւ եւ Ս. Հոգիին ապաւինեցաւ, որոնց համար, արժանի եղաւ Աստուծոյ շնորհներուն:

Ս. Պատարագի աւարտին, տեղի ունեցաւ մատաղօրհնէք ու խաղողի օրհնութեան արարողութիւնը: Ներկայ հաւատացեալները օրհնուած խաղողով ու մատաղով վերադարձան տուն, Աստուածամօր տօնին առթած բարիքները փոխադրելով իրենց սեփական յարկերուն տակ:

Նշենք, որ Շաբաթ, 11 Օգոստոսի երեկոյեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ տեղի ունեցաւ նախատօնակի արարողութիւն:

ԱՅԼ ՇՐՋԱՆՆԵՐ

Ինչպես նշեցինք, տոնական այս օրուան առիթով, մեր Թեմի բոլոր եկեղեցիներուն մէջ կը տիրէր տոնական մթնոլորտ:

Առաջնորդ Սրբազան Յօր տնօրինումով, Մեծի Տանն Կիլիկիոյ միաբանութենէն հիւրաբար մեր Թեմը գտնուող երկու Սրբազան հայրեր Ս. Պատարագ մատուցանեցին եւ խաղողօրհնէք կատարեցին մեր եկեղեցիներուն մէջ: Զուէյթի եւ Ծոցի երկիրներու Թեմի Կաթողիկոսական փոխանորդ Բարձր. Տ. Կորիւն Արք. Պապեան եւ Սպահանի Թեմի Առաջնորդ Գերշ. Տ. Բաբգէն Եպսկ. Չարեան պատարագեցին յաջորդաբար՝ Ս. Նահատակաց եւ Սան Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիներուն մէջ:

Նմանապէս Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Լաս Վեկաս այցելեց Ազգ. Զրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան, Ս. Պատարագ եւ խաղողօրհնէք կատարելու համար Լաս Վեկասի ծխական մեր համայնքի գաւակներուն համար: Իսկ Արժ. Տ. Մեսրոպ Ա. Զիւլ. Թաշճեան նմանօրինակ առաքելութեամբ մեկնեցաւ Քոլորադո:

ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԷՋ

Յայտնենք նաեւ, որ Շաբաթ, 11 Օգոստոսի երեկոյեան, Առաջնորդ Սրբազանին նախագահութեամբ Ս. Պատարագ եւ խաղողօրհնէքի արարողութիւն տեղի ունեցաւ նաեւ Ազգ. Առաջնորդարանի Ս. Տրդատ եւ Ս. Աշխէն մատրան մէջ:

Ս. Պատարագը մատուցանեց Գերայ. Տ. Միւռն Ծ. Կրդ. Ազնիկեան: Ներկայ հաւատացեալներուն շարքին էր երիտասարդներու նկատառելի թիւ մը: Կ'արժէ յիշատակել, որ Առաջնորդ Սրբազանին տնօրինումով, Ազգ. Առաջնորդարանի Մատրան մէջ ամսական հերթականութեամբ Ս. Պատարագի արարողութիւնները կը կազմակերպուին յատկապէս երիտասարդութեան համար:

ON THE FEAST OF THE ASSUMPTION OF THE HOLY MOTHER OF GOD

MAY THE HOLY MOTHER OF GOD BE THE MODEL FOR ALL ARMENIAN MOTHERS

On Sunday, August 12th, the Armenian Church celebrated the Feast of the Assumption of the Holy Mother of God with Divine Liturgy and the blessing of grapes. Given that this Feast was also a celebration of St. Mary's Church, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, celebrated Divine Liturgy at St. Mary's Church in Glendale and officiated over the blessing of grapes and *madagh* ceremonies.

In his sermon the Prelate extolled the virtues of St. Mary such as her righteousness, humility, and modesty, stressing that it was due to her virtuous nature that she was found worthy of becoming the Mother of God. She was found worthy of God's graces for she loved God and placed her trust in His Word and Holy Will. The Prelate also emphasized the love and respect of the Armenian people, and especially Armenian woman, demonstrate towards St. Mary pointing out that our faithful continue to turn to her as their role model and intercessor just as they did centuries ago. The blessing of grapes and *madagh* took place following Divine Liturgy.

By the ordinance of the Prelate, H.E. Archbishop Gorun Babian, Catholicos Vicar of Kuwait and the Gulf Countries, and H.G. Bishop Papken Tcharian, Prelate of the Diocese of Isfahan, Iran, celebrated Divine Liturgy and presided over the blessing of grapes at Holy Martyrs Church in Encino and St. Gregory Church in San Francisco respectively. Christian Education Department Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian and Archpriest Rev. Mesrob Tashjian presided over services at the Las Vegas and Colorado parishes respectively.

Divine Liturgy was also celebrated at the Prelacy St. Dertad and St. Ashkhen Chapel on the evening of Saturday, August 11th, as well as the blessing of grapes. Very Rev. Fr. Muron Aznikian conducted the services presided over by His Eminence the Prelate.